

ՀԱՍԳՈՒՅՆ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

ԵՐՎԱՆԴՅԱՆ Զ. Ա.

Ղարաբաղի բարբառի բառային կազմի հաստատման գործընթացը բնորոշվում է հնագույն արմատական ձևերի պահպանմամբ, հին հայերենի համեմատությամբ ձայնադարձի տարբեր աստիճաններ ներկայացնող հիմքերի գործածությամբ: Բարբառում առկա մի շարք բառեր գրաբարից շեղվում են հնչյունակազմի այլնայլ դրսևորումներով, որոնց մի մասը առավել հնագույն վիճակ է ներկայացնում, քան դասական հայերենում հաստատված ձևերը: Պետք է նշել, որ գրաբար - բարբառ հարաբերակցության մեջ ներառված նման տարբերությունների մեծ մասը նախալեզվյան հիմքեր ունի, որով Ղարաբաղի բարբառը մասամբ կապվում է հայերենի այլ բարբառների հետ: Այդ կապը մասնակիորեն արտահայտվում է Հր. Աճառյանի հետևյալ դիտողության մեջ նշված փաստերով. «Բարբառներում կան բառեր, որոնց արմատը կարելի է գուշակել, բայց գրականության մեջ ավանդված չէ: Այդպիսի արմատներից մի քանիսը գտնվում են բարբառներում: Այդպես են բոժոժ-*բոժ*, զգենուլ-զգեստ-*զեստ*, ընկեր-*զեր* (հմմտ. ընկույզ-կուզ, անկողին-կողինք), ծմակ-ծմայ, կաղկանձել-կոնձկոնձալ-կնձկնձալ-կոնձալ, կանգնել-կանգ առնել, կողկողել-կողալ-«ողբալ», կոճան-կոճի, գոճի, կոճել-կոուճ, հակառակ-հակառ, հանգչիլ-հանգիստ-հանգ, ճառագայթ-ճառագել, ճնճղուկ-ճնճուղ, նաւակատիք-կատիկ (>աւագ կատիկ), շուրջ-շուռ գալ, պէպէն-պէն, պօսպօսալ-պօստալ տիղմ-տիլ, ցողուն-ցող, օրօրել-օրել»¹:

Վկայված բառերից Ղարաբաղի բարբառին հատուկ են *կրնձկոնձալ* «շան վնգստալը», *կ' Փճի/զոճի* «խոճկոր», *կոճ* «աղի մեծ կտոր», *հանգ* «ձև, միջոց», *շոռ կ' ւն* // *շոռ տալ* «շրջել, շրջվել, թափառել, որոնել և այլն», *ճոաքել* «շողալ, փայլել» արմատական ձևերը: Ըստ Հր. Աճառյանի, բարբառի խոսվածքներում արտահայտված է նաև *պօսպօս* ձևը. «Ղրբ. *պօ'սպօս* անել վայս ու այն տեղ պահվտել և թաքուն նայիլ». կա և *պոս* տալ «աղվեսի՝ իր հետևից ընկած շների ձեռքից ազատվելու համար անակնկալ կերպով ուղղությունը փոխելով՝ հանկարծ ուրիշ կողմ ցատկելը»²:

Բարբառներին հատուկ արմատական այլ ձևեր են առանձնացվում թե՛ Արմատական բառարանում և թե՛ Գ. Ջահուկյանի մի շարք աշխատություններում, այդ ձևերի մի զգալի մասը տեղ է գտել նաև Ղարաբաղի բարբառում:

¹ Աճառյան Հր., *Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ)*, մ. 2, Ե., 1951, էջ 417-418:

² Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ)*, հ. 4, Ե., 1979, էջ

Անցնելով բարբառում պահպանված հնագույն արմատների և արմատական տարբերակների քննությանը՝ պետք է նշել, որ նկատի չենք ունեցել բարբառում գործող հնչյունափոխական մի շարք երևույթների հավանականությունն ու բացառությունը: Այս խնդրում առանձնապես ուշադրության է արժանի բազմավանկ բառերի սկզբում նախաշեշտ վանկի ձայնավոր հնչյունի անկման երևույթը: Բնականաբար, հաշվի ենք առել միավանկ-բազմավանկ հիմքերի հակադրությունը, քննության մեջ ներառել նաև երկվանկները, քանի որ այս պարագայում վերջիններս կապվում են միավանկ հիմքերի հետ: Հիմք ընդունելով հիշյալ պայմանները՝ վերը նշված օրինակներից բացի, Ղարաբաղի բարբառի համար կարելի է առանձնացնել նաև հետևյալ արմատական ձևերը.

Րէքնակ (<^{*}reḡ-) արեգակն - Թեև բարբառի որոշ խոսվածքներին հատուկ են բառակազմի **ի, ը** ձայնավորներով տարբերակներ, սակայն խոսվածքների մի մասում սովորական գործածություն ունեցող առանց նախաձայնի **րէքնակ** ձևը կարելի է հնագույն արտահայտություն համարել:

Նօթի (<^{*}nagḡh-) անօթի - Առանց նախաձայնի ձևը առանձնացվում է Գ. Զահուկյանի կողմից, «...նախահավելականի բացակայություն՝ **ա-նաւթի և նաւթի**...այսպէս նաև անհայտ ծագման **ա-նաւսր և նաւսր**»³:

Պ ճԷ Լ (<^{*} bḡḡl-) բոլոր - Հր. Աճառյանի վկայությամբ, արմատական ձևը պահպանվում է նաև հայերենի մի քանի այլ բարբառներում. «Հայերենի մեջ «բարձրանալ» գաղափարից ունենք **բլուր**, որ կազմված է հնիս. bḡḡl-ձևից՝ ուր մասնիկով. իսկ «գնդաձև» գաղափարի համար ունինք գվռ. **բուլ** «խմորի կտրված մեկ գունտ, որ մի հաց կդառնա (<Անգլ. բիւլ. Ջդ. բ'ուլ, Գնձ. Դրբ. Շմ.պիւլ)»⁴: Ավելացնենք, որ Ղարաբաղի բարբառում **պուլ** բառը, «խմորի գունդ» նշանակությունից բացի, ունի նաև «սրբություն, երախտիք, հարգանք» իմաստները, որոնք ամփոփված են **պլուէրը, կօխ տալ** արտահայտության մեջ:

Մնալ (<^{*}es-ma-mi) գգենում - Արմատական ձևի նախնականության վերաբերյալ առանձին դիտողություն ունի Հր. Աճառյանը. «Աննախդիր ձևերը պահպանված են մինչև այսօր գավառականներում. ինչպես՝ Դրբ.Դգ. **կէնալ** «հագնիլ», **կէց տալ** «հագցնել», **կէ'ց** «հագի'ր»⁵: Բարբառի համար սովորական է **կրէնալ** (<^{*}gḡ ei) կեալ «բնակվել, ապրել» բառի բայական կիրառությունը, որը հաճախ շփոթում են նախորդ արմատի հետ, և նույնիսկ չի հիշատակվում Արմատական բառարանում: Անշուշտ, դրա պատճառն այն է, որ **զգենուլ և կեալ** ձևերը միմյանցից տարբերվում են հնչյունական այնպիսի դրսևորմամբ, որը խիստ բնորոշ է Ղարաբաղի բարբառին, այսինքն՝ **զգենուլ** բայի բարբառային ձևի մեջ

³ Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987, էջ 254:

⁴ ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 461:

⁵ ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 88:

ձայնավորական տարրը պարզ **է** հնչյունն է (**կէնալ**), իսկ **կէալ** բայի հիմքում ունենք երկբարբառակերպ **քէ** հնչյունը (**կքէնալ**)։ Այսպիսով, բարբառի **կքէնալ** ձևը համապատասխանում է **կէ(ա)+ան ձևին**, որը ըստ Հր. Աճառյանի, արմատական ձևով պահպանվում է միայն հին բարդությունների կազմում. «...**Կէն**-նախորդի (կէան) անշեշտ ձևն է, որ գործածվում է միայն բարդությանց սկիզբը. ինչ. կէնակից...»⁶։ Նկատի ունենալով այս՝ կարելի է ենթադրել, որ **կէալ** > **կքէնալ** բառի՝ բարբառում անկախ հանդես գալը երբեմնի հնագույն երևույթի արտահայտություն է, մանավանդ այն պատճառով, որ բառը բարբառում գործածվում է բոլոր անդամ և դիմավոր ձևերով։

Հիշյալ երկու բառերի կառուցվածքային տարբերությունը ցույց տալու համար ներկայացնենք զուգահեռ թեք ձևեր, ինչպես՝ կէնում եմ «հագնում եմ», կքէնում եմ «ապրում եմ, բնակվում եմ», կէ՛ց «հագի՛ր», կա՛ց «սպասի՛ր, մնա՛», կէցա «հագա», կքցա «մնացի» և այլն։

Խքէխտ (խեղդ(ել) - Հայերենի հին ու նոր գրական տարբերակներում այն սովորաբար ունի բայական գործածություն, իսկ արմատական ձևով հանդես է գալիս տարբեր բաղադրությունների մեջ։ Ղարաբաղի բարբառում բառարմատը հաստատված է նաև անկախ ձևով, որն արտահայտում է օորնէ բանի ամենանեղ տեղը» նշանակությունը։

Խկխալ (<kel-) > խլրտալ - Թեև Գ. Ջահուկյանը չի վկայում Ղարաբաղի բարբառում գործածվող պարզ արմատով կրկնավորը, սակայն բառը իր նշանակությամբ կապվում է այլ բարբառներում առկա **խկպտալ**, **խլրտալ** ձևերի հետ՝ առավել հարազատորեն արտահայտելով լատ. *celeber* բառի «բազմամարդ, աշխույժ» իմաստները։

Ծամ (< g'mbh) - Հայերենի հին ու նոր գրական տարբերակնե-

րում բառն ունի բայական գործածություն. «Ծամ. արմատ առանձին անգործածական, որից ծամել»⁷։ Ղարաբաղի բարբառում այն հանդես է գալիս անկախ կիրառությամբ և ունի «մի անգամ բերանը դնելու և ծամելու չափով» իմաստը։

Օքէն (< g'en-) > **ծին** - Հայերենի մի քանի բարբառների նման Ղարաբաղի բարբառի խոսվածքներում ևս պահպանվում է արմատական ձևը, որի իմաստային բացատրությունը հետևյալ կերպ է ներկայացնում Հր. Աճառյանը. «**Օին** արմատը ունին Բլ. Կր. Նբ. Վն. այսպես է կոչվում կովի յուրաքանչյուր տարվա ծնունդը՝ սկսած չորրորդից»⁸։ Ավելացնենք, որ Ղարաբաղի բարբառում բառի գործածությունը տարածվում է նաև այլ չորքոտանիների վրա՝ հաշվումները սկսելով առաջին իսկ ծննդից։

⁶ Նույն տեղում, էջ 565:

⁷ Նույն տեղում, էջ 441:

⁸ Նույն տեղում, էջ 458:

Բարբառում մեծ տարածում ունեն հիմքային այնպիսի տարբերակներ, որոնք ձայնադարձի տարբեր աստիճաններով հնչյունակազմի զանազան դրսևորումներով տարբերվում են հին հայերենին հատուկ ձևերից և ենթադրում նախալեզվյան հիմքային տարբերակներ: Նման տարբերություններից մի քանիսը նշված են Գ. Ջահուկյանի՝ բարբառների բառային հնաբանությունները ներկայացնող խմբավորումներում. «...ձայնադարձի տարբերություններ, որոնք հաճախ արտացոլում են հ. է.ձայնադարձի տարբեր աստիճաններ՝ բառնալ (bhrgh-)~ բեռնել, լեսուլ~լուսել, լող~լեղ, կաղին~տկողին (տ-ն թերևս նույնն է **տէր, տիկին, տիեզերք** բառերի տի-ի հետ՝ «մեծ»), ճետ «ցեղ, սերունդ»~ ճուտ, քերել (<*ker)~քորել»⁹: Պետք է նշել, որ Գ. Ջահուկյանի վկայած բոլոր զուգահեռներն էլ արտահայտված են Ղարաբաղի բարբառում. ընդ որում մի դեպքում դրանք պահպանվել են զուգահեռ տարբերակներով (կաղին-տկողին, քերել-քորել), իսկ մի այլ դեպքում զուգահեռներից միայն մեկը (**պէռնէլ** «բերը փոխադրամիջոցի վրա դնել, բարձել», **լօսվէլ** «միմյանց քսվելով մաշվել, ողորկվել, հղկվել», **լէղ տալ** «լողալ»):

Ղարաբաղի բարբառի համար ձայնադարձի տարբեր աստիճաններ ներկայացնող հիմքային տարբերակ է նշում Հր. Աճառյանը. «Մի ուրիշ օրինակ է Ղրբ. **պէրփէլ** «կրակը արծարծել, հրահրել», որ **բորբորէլ** բառի բարձր աստիճանի ձայնադարձն է ներկայացնում և չկա ո՛չ գրաբարում և ո՛չ էլ ուրիշ բարբառներում»¹⁰:

Դրանց հետ միասին բարբառում ունենք բառերի մի որոշակի քանակ, որը մեծ մասամբ ներկայացնում է հին հայերենին հատուկ հիմքերի տարբերակները, իսկ մի փոքր մասն էլ հաստատված է և՛ ընդհանուր հայերենին հատուկ, միաժամանակ և՛ նրանից ինչ-ինչ տարբերություններ ներկայացնող զուգահեռներով: Այժմ դրանք ներկայացնենք՝ կատարելով նաև ծագումնաբանական, իմաստային և կառուցվածքային մասնակի դիտարկումներ.

Գր **թի** [**<vai-lo-s>**] գայլ - Ընդհանուր հայերենում հաստատված ձևի համար ենթադրվում են տարբեր նախահիմքեր: Նման կարծիք ունի նաև Գ. Ջահուկյանը. «**Գայլ**-ի համար հմմտ. գալլ. **vai-lo-s**, հ. իռլ. **foel** «գայլ»: Ոմանք այն հանգեցնում են **վ/կ** **uos** «գայլ» նախաձևին, բայց կան հնչյունական դժվարություններ. թերևս

կարելի է ենթադրել խառնուրդ (կոնտամինացիա)»¹¹: Բարբառային ձևի համար պետք է ենթադրել ընդհանուր հայերենից տարբեր նախահիմք, քանի որ բարբառում գործող հնչյունափոխական կանոններով բացատրվում է հին հայերենի

⁹ **Ջահուկյան Գ.**, *Հայ բարբառագիտության ներածություն (այսուհետև՝ ՀԲՆ)*, Ե., 1972, էջ 278:

¹⁰ **Աճառյան Հր.**, *Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔ)*, հ. 3, Ե., 1957, էջ 56:

¹¹ **Ջահուկյան Գ.**, *ՀԼՊ*, էջ 198:

այ երկրաբառից ու/ու ձայնավորին անցումը: Դրան հակառակ՝ բառաձևի դիմաց լեզուներում արտահայտվում են նաև *n*, *ni* հնչյուններով հիմքեր, որոնց դրսևորումներից մեկն էլ, ամենայն հավանականությամբ, բարբառում հաստատված ձևն է:

Կ^մ ղել/կ'ելել «թաքցնել» (<**yl-*)գաղեմ, *կ'օղ (<**yl-*)> գող - Նախալեզվյան ձայնադարձի տարբեր աստիճանները ներկայացնող ձևեր են, որոնք արտահայտված են հայերենի գրական-խոսակցական տարբերակներում. պարզապես բարբառը երկրորդ դեպքում էլ պահպանել է արմատական ձևը՝ առանց **տ** աճականի: Զուգահեռների մասին Հր. Աճառյանը հետևյալ բացատրությունն է տալիս. «Հայերեն բառերը՝ իրար հետ կանոնավոր համապատասխանությամբ՝ աճած ենք գտնում նաև **տ** աճականով. այսպես՝ գողտ (*որից գողտուկ*) *գաղտ* և *գեղտ* (տե՛ս վերը *գաղել* և *գաղտ* բառերի տակ), որոնք ցույց են տալիս հնիս. *vold*, *veld*, *vld* ձևերը»¹²:

o

Կաղաղ - Պետք է ենթադրել, որ այս բառը կաղին (<**gel-*) ձևի հիմքային տարբերակներից մեկն է, որը բարբառում գործածվում է «ընկույզի կանաչ կեղև» իմաստով: Թերևս բառի համար չի կարելի բացառել նախալեզվյան այլ ձայնադարձով մյուս արմատական ձևը՝ **yl*<*կաղաղ* «որջ, հանգիստ, խաղաղ»:

o

Պղէծ - Հայերենի մի շարք բարբառների նման Ղարաբաղի խոսվածքներում ևս բառը գործածվում է **getd*<*կայծ* նախաձայնի տարբերակով՝ հանդես բերելով նաև իմաստային տարբերություններ. *կայծ*<*կղէծ*//*կէծ* ձևն ունի «տաք, շատ տաք» իսկ *պղէծ*՝ «կրակի կայծ» իմաստը: Սակայն բարդությունների մեջ երևան է գալիս նաև դրանց իմաստային նույնությունը՝ *պծընպէծին* անել «կայծկլտալ», *կէծակ* «կայծակ»:

Հէտի (<**pedo*) - Ղարաբաղի բարբառում հաստատված *հէտ* բառի և նրա հիմքային տարբերակների վերաբերյալ Հր. Աճառյանը հետևյալ դիտողությունն է անում. «Երբեմն գրաբարից մնացած բառերը այնքան են ձևափոխվել ձայնական օրենքների պահանջմամբ, որ ձայնադարձը բոլորովին անճանաչելի է դարձել: Օրինակ՝ 3 աստիճանի ձայնադարձներից (հետք, ոտք, յատակ) Ղարաբաղի բարբառում, ինչպես և ուրիշ շատ բարբառներում *յատակ* բառը ջնջված է. *հետք* իր նախնական «ոտք» իմաստը կորցնելով, պահպանված է միայն իբրև նախագրություն՝ *հետ* «միասին», որ դառնում է Ղրբ. *նրհէտ*. իսկ *ոտք* բառը դարձել է Ղրբ. *վրէննը*: Ի՞նչ կապ կարելի էր զգալ *նրհէտ* և *վրէննը* բառերի մեջ, որոնք ձայնադարձի առաջին երկու աստիճանն են ներկայացնում»¹³:

¹² ՀԱԲ, հ. 1, էջ 573:

¹³ ԼՔ, էջ 55-56:

Հակառակ Հր. Աճառյանի կարծիքի՝ բարբառի խոսվածքներում սովորական գործածություն ունի բառի երեք տարբերակով ձևը: Այսպես՝ բարբառում հաստատված *հէտ* արմատական ձևը արտահայտում է «ոտնահետք» իմաստը, *յատակ* հիմքի դիմաց բարբառն ունի նախաձևի անկումով հաստատված *ատակ* ձևը, որը հիմնականում գործածվում է «դժոխք» նշանակությամբ: Ինչ վերաբերում է *ոտն* բառին, ապա բարբառի խոսվածքների մի մասում այն արտահայտվում է *վըէտ(ը)*, իսկ մյուս մասում՝ *վըէննը*, որը ներկայացնում է *տն >նն* հնչյունափոխությամբ առաջ եկած տարբերակը: Հէտ արմատական ձևն ունի նաև «անգամ», իսկ *ն* նախահավելականով *նըհէտ* տարբերակը՝ «հետ, միասին» իմաստը:

Մոլ (<*smol-) «ծուխ», *սոխ*-(smugh-) «ծուխ» - Չնայած բարբառում հաստատված երկու ձևերն էլ գործածվում են «ծուխ» նշանակությամբ, սակայն ունեն իմաստային տարբեր երանգներ. *սոլ*-մուլ, *սոլ անէլ* նշանակում է «ծխախոտի ծուխ, ծխալ», իսկ *սոխ*-մուխ՝ «թանձր ծուխ»:

Այս շարքը լրացնող մյուս բառերը գործածվում են բարբառային յուրահատուկ տարբերություններով, որոնց նախահիմքերի համար պետք է ենթադրել հնչյունափոխական հնագույն ինչ-ինչ դրսևորումներով ձևեր:

Գ *նի* ըզ («գիրկ») - Բարբառում հաստատված բառիմաստը որոշակիորեն տարբերվում է ընդհանուր հայերենից. այն գործածվում է «ոտքի կոնքից մինչև ծունկը եղած մասը» նշանակությամբ, որով մոտենում է *գոգ* (կ'Փք) «գիրկ» բառի իմաստին: Բառաձևը և յուրահատուկ իմաստը ենթադրել են տալիս նաև *գիրգ* «փափուկ, քնքուշ, փափլիկ» բառի հետ ունեցած կապը: Մյուս կողմից, բառի ծագման համար առավել հավանականը անմիջական փոխառություն լինելն է՝ բառասկզբի ձայնեղ բաղաձայնի անփոփոխ մնալու պատճառով:

Վերթիմ *նի* ըթ *նի* մնը (<Կer-) > երդումն - Բառի համար տարբեր նախահիմքեր են ենթադրում, որոնք ամփոփվում են Գ. Ջահուկյանի հետևյալ բացատրության մեջ. «*Երդումն*-ի մերձավոր գուգահեռները որոշված են ըստ իմաստի... Դժվարություն է հարուցում ճիշտ նախաձևի վերականգնումը. Հյուբշմանը և, նրա հետևությամբ, Աճառյանը տալիս են *ertu- նախաձևը, որ, սակայն, չի համապատասխանում մյուս ձևերին: Մեր վերականգնումը ճիշտ է, եթե *Կr- կապակցության մեջ *Կ-ն ընկնում է»¹⁴:

Բարբառում հաստատված *վերթիմ* և *ուրթումնը* տարբերակների համար պետք է ընդունել ընդհանուր հայերենից տարբեր նախահիմքեր, մանավանդ որ ցեղակից լեզուներում առկա ձևերը նման ենթադրության հնարավորություն են տալիս:

¹⁴ Ջահուկյան Գ., ՀԼՊ, էջ 199:

Օխտը (<* septm) եւաթն - Գրաբարից բարբառային ձևին անցումը Հր. Աճառյանը համարում է դժվար բացատրելի և հետին շրջանի արտահայտություն՝ միաժամանակ նման ձևերի առաջացման համար բերելով Ա. Մեյլեի հետևյալ դիտողությունը. «Այսպիսի մի զարմանալի փոփոխություն ներկայացնում են **եօթն, օձ, գօտի, թօթափել** բառերը, որոնք բարբառներում դառնում են **օխտը, աղձ, գախթի, թախթի**»։ Մեյլե հայագետը այս բոլորը բացատրում էր հետևյալ ձևով. այդ բառերը հնապես ունեին *չ*, որ բաղաձայնից առաջ թավանալով դարձավ *ջ*, բայց որովհետև հայերենը չունեւ *ջ*, ուստի շուտ տվավ *խ*-ի, ճիշտ ինչպես հին հայերենում կազմվել են **գառնաւուխտ, ճանանչաւուխտ, Հագարաւուխտ**, բառերը, իրանական *ft* վերածելով *hj*. Խտ»¹⁵:

Թա (<* te)>թէ - Բարբառային ձևը կարելի է համարել պարսկերենի ազդեցության հետևանք (to «թե»): Մյուս կողմից, հնարավոր է ենթադրել պարսկերենի ձևին մոտ նախալեզվյան որևէ հիմքի արտահայտություն հայերենում:

Լպտտէլ (<*(s) lib-ra)>լպիրծ - Հայերենի մի շարք բարբառներում գործածվող տարբերակի համար Հր. Աճառյանը հետևյալ բացատրությունն է տալիս. «Սրանցից **լպրծիլ և լպտտէլ** հնիս. sibr-արմատի հին ածականներն են, իսկ մյուսները կազմված են *տ* սաստկականով, իբրև **լպծրտէլ**»¹⁶: Ղարաբաղի բարբառում **լպտտէլ** բառը չի նշանակում «սահուն», ինչպես նշված է արմատական բառարանում, այլ այն ունի «միսը երկար մնալուց՝ հնանալուց փափկել» իմաստը:

Միծիլինգ/ծ րի լ լ լ լ կ «ճկույթ» - Արմատական բառարանի վկայությամբ բառը փոխառյալ է կովկասյան լեզուներից¹⁷, ընդ որում Ղարաբաղի բարբառի խոսվածքներում գործածվող ձևերը ցույց են տալիս, որ դրանք ոչ թե ընդհանուր հայերենից են բարբառին անցել, այլ ներկայացնում են մայր ձևի պատկերը:

Լըբաստրակ «նապաստակ» - Հայերենի բարբառների մեծ մասում հաստատված է *լ* նախաձայնով տարբերակը, որի արտահայտությունը Հր. Աճառյանը բացատրում է պատմական հնչյունափոխությամբ. «Այս բառերի մեջ եղած *ր* ձայնը և **ն>լ** ձայնափոխությունը ցույց է տալիս, որ բառի հնագույն ձևն էր *նապարստակ, որ *ր* շչականից առաջ ջնջվեցավ հայերենի մեջ, իսկ բարբառներում՝ տեղափոխությամբ հեռանալով շչականից՝ անկումից ազատ մնաց. միննույն ժամանակ՝ *ն-ր* տարանմանությամբ դարձավ **լ-ր**»¹⁸: Պետք է նշել, սակայն, որ Ղարաբաղի բարբառի հնչյունափոխական կանոններով հնարավոր չէ հաստատել ն>լ անցումը: Ամենայն հավանականությամբ, գրական և խոսակցական տարբերակների հիմքում ընկած են եղել *լ և ն* նախաձայններով սկզբնաձևեր:

¹⁵ ՀԼՊ, էջ 403:

¹⁶ ՀԱԲ, հ. 2, էջ 305:

¹⁷ ՀԱԲ, հ. 3, էջ 204-205:

¹⁸ Նույն տեղում, էջ 428-429:

Լէնգ/լինգ (<*nèy-) նիգ - Նախորդ բառի նման այստեղ ևս գրական-խոսակցական տարբերակների առաջացման համար Հր. Աճառյանը հիմք է ընդունում տարնմանական փոփոխությունը. «Լինգ. (ըստ այսմ վերջինիս ծագման ընթացքն է եղել՝ **նիգ** ն հավելվածով՝ **նինգ**-առաջին ռնգականի տարանմանությամբ էլ՝ **լինգ**»¹⁹: Քանի որ բարբառի համար հատուկ չէ **ն>լ** հնչյունափոխական երևույթը, բնականաբար, խոսակցական տարբերակի համար պետք է ենթադրել այլ նախաձև: Ամենայն հավանականությամբ, բառի հիմքում ընկած է եղել ռուսերենի արմատին զուգահեռ մի ձև, մանավանդ որ բարբառի խոսվածքներում բառս գործածվում է նաև **լոնգը տալ** «տեղից շարժել, հրելով, ուժով շրջել» և այլ իմաստներով:

Կոզնի/կուզնի (<og' hiniho)>ոզնի - Բարբառային տարբերակի նախաձայն **կ**-ի առաջացումը Հր. Աճառյանը բացատրում է բառակազմական հնարքներով. «Սրանցից **կոզնի** ձևի մեջ **կ** նախաձայնը ծագած է շրջմամբ՝ **ոզնիկ** նվազականով առաջացել է Շմ. **կուզնիկ**»²⁰: Քիչ հավանական համարելով այս կարծիքը՝ կարելի է ենթադրել, որ բարբառային ձևի վրա ազդել է պարսկերենից փոխառյալ **կուզ** բառը, մանավանդ որ Ղազախի խոսվածքում **ոզնի** բառի համար պահպանված է **կուզ** արմատական ձևը:

Սրէռ/սէռ «սայր, սուր կողմ, լեռան գագաթ» - Հր. Աճառյանը ընդհանուր հայերենում հաստատված **սայր** բառի տարբերակ է ընդունում **սայռ** ձևը, որից էլ **այ >է** հնչյունափոխությամբ ձևավորվել է **սէռ** բառը: Հեղինակը դրանք ներկայացնում է իմաստային բնորոշ բացատրություններով. «Բառիս երկրորդ ձևը պահում են Ղրբ. **սէռ**, Շմ. **սրռ** «երկու մակարդակների միացման գիծը... օր. **պատի սէռը, քարի սէռը**, բայց մասնավորապես **մեջքի սէռը** «թիկունքի մեջտեղի ուղղահայաց գիծը» **լեռան սէռը** «լեռան՝ հորիզոնի հետ միացման գիծը»: Սրանք ցույց են տալիս, որ **սայր** բառի բուն իմաստը պետք է դնել ո՛չ թե «սուր կողմ», այլ «ծայր»²¹:

Յեր (<*uper-)>վեր - Չնայած Արմատական բառարանում չկա որևէ բացատրություն բարբառային տարբերակի մասին, սակայն այն կարող է ձևավորված լինել նախահիմքից՝ միջձայնավորային դիրքի **p>h>յ** փոփոխությամբ, այնուհետև նախաձայն **ռ** ձայնավորի անկումով:

Օշափ/օշէփ (<պիլ. vèšâp)> վիշապ - Բարբառային տարբերակի ծագման ու ձևավորման վերաբերյալ կան շատ կարծիքներ, որոնցից առավել հավանականները համապատասխանում են Ա. Պողոսյանի հետևյալ բացատրությանը. «**Օշափ**» բառի մեջ **վ**-ի անկում տեղի չի ունեցել, քանի որ բարբառիս **օշափ** ձևը, ինչպես նշել ենք, գալիս է ոչ թե **վիշապ** ձևից, այլ գրաբարից

¹⁹ Նույն տեղում, էջ 451:

²⁰ Նույն տեղում, էջ 550:

²¹ ՀԱԲ, հ. 4, էջ 170:

ավանդված *յուշապ* տարբերակից, մանավանդ որ Ագուլիսի, Մեղրու բարբառներում էլ ունենք՝ *հուշափ, հոշափ*²²:

Տանդ «տենդ» - Բարբառի խոսվածքներում պահպանված տարբերակը գործածվում է այլ իմաստով, քան բացատրվում է Արմատական բառարանում և բարբառագիտական ուսումնասիրություններում: Բառի բուն իմաստն է «արևահարություն», *տանդել* «արևահարվել», իսկ *տենդ* «հիվանդություն» բառի իմաստն արտահայտվում է *ճերմ*-ջերմ, *ճերմել* <ջերմել> ձևերով: Նկատի ունենալով բարբառին հատուկ իմաստով գործածությունը՝ բառը կարելի է բխեցնել հնիս. *dau-* «այրել, վառել» արմատից կամ ցեղակից լեզուների այլ ձևից:

Ճախ (<sk'a<kha) ցախ - Չնայած բարբառային տարբերակը հնարավոր է բխեցնել ընդհանուր հայերենի ձևից, ուր *խ*-ի ազդեցությամբ տեղի է ունեցել *g>đ* փոփոխություն, սակայն կարելի է ենթադրել, որ այն նախահիմքի արտահայտություններից մեկն է, քանի որ *ցախ* բառի համար առանձնացվում են նախալեզվյան տարբեր ձևեր. վճնիկ հայ բառ, որի նախաձևը (գոնե նախաձայնի կազմից) անստույգ է... հայերենի համար ենթադրվում է հնիս. *kʰākhā* ...վերջապես Petersson, հայերենի նախաձևը դնում է հնիս. *skʰ -kho*²³: Նույն նախահիմքից բարբառում պահպանվել են նաև *ցաք* «մի տեսակ փշոտ բույս» և *ցակ*, որ գործածվում է *ցակաստ* «ցաքահատ, դանակի նման ձեռքի մեծ գործիք» բառի կազմում:

Քոյր (<*suesor-) բառի դիմաց բարբառի խոսվածքներն ունեն *քուր, քիր, քրէր* հիմքային տարբերակները, որոնցից առաջինը բարբառում գործող հնչյունափոխական կանոնով (*ոյ>ու*) կարող է բխել հին հայերենին հատուկ *քոյր* ձևից, իսկ մյուսների համար ենթադրվում են հնչյունական տարբերակներով այլ նախահիմքեր: Սեռական հոլովում երեք ձևերն էլ ներկայացնում են միևնույն պատկերը՝ *քվօր*, որը կարող է ծագել *քուէր* նախաձևից՝ արտահայտելով ինչպես օրինաչափ *ու>վ* փոփոխությունը, այնպես էլ սեռականի կանոնավոր ձևավորման համար բնորոշ *է>օ* անցումը, ինչպես ունենք՝ *եղբայր >ախպէր- ախպօր, հայր > հէր- հօր, մայր > մէր-մօր, անէր > հանէր-հանօր, տագր > տէքիր-տէքօր* և այլն:

Բարձր (<bhr̥g hu-r)բառը բարբառի խոսվածքներում հաստատվել է

պ ւն ցր րի //պէց րի ր//պէցր րի տարբերակներով, որոնց վերջնականի *ու*-ն կարող է բխել նախահիմքի ձևից, որը պահպանվում է հին հայերենի սեռական հոլովաձևում:

Հոդվածում տրված բառերը, անշուշտ, քննարկված են հայագիտական մեծ ու փոքր ուսումնասիրություններում, սակայն դրանց մի զգալի մասը Ղարաբաղի բարբառում գործածվում է տարբեր հնչյունակազմական և իմաստային ինչ-ինչ յուրահատկություններով: Այս առումով էլ նման բառերի իրական բացահայտումը հայագետներին կարող է հնարավորություն տալ ընդարձակելու դրանց նկատմամբ ունեցած պատկերացումները և նոր մոտեցում ցուցաբերելու հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

²² Պողոսյան Ա., Հաղորդի բարբառը, Ե., 1965, էջ 52:

²³ ՀԱԲ, հ. 4, էջ 446:

**ДРЕВНЕЙШИЕ КОРНЕВЫЕ СЛОВА В КАРАБАХСКОМ
ДИАЛЕКТЕ**

ЕРВАНДЯН З.А.

Резюме

Процесс упрочения лексики карабахского диалекта – это сохранение древнейших корневых форм, использование оснований, отражающих артикуляционные вариации древнеармянского языка (грабара). Некоторые слова диалекта отклоняются от грабара по своей фонетике.

При анализе унаследованных от грабара корней и корневых вариантов особое внимание следует уделить феномену выпадения гласного в предударном слоге многосложных слов, учитывая противоположность односложных и многосложных основ, а также включая в анализ двусложные слова, поскольку в этом случае последние связаны с односложными основами.

Рассматриваемые слова являлись предметом исследований многих изысканий армяноведческих (Гр. Ачарян, Г. Джаукян, А. Погосян), однако существенная их часть в карабахском диалекте функционирует с определенными фонетическими и смысловыми особенностями.